

Հովհաննես Թումանյան

նամակ Ղազարոս Աղայանին

Թիֆլիս — Էջմիածին

1893 թ. նոյեմբերի 18

Մեծարելի բարեկամ .

Բաց նամակիս չպատասխանեցիք . չգրեցիք, թե ինչ է գրքի գինը, որերորդ տպագրությունն է կամ ինչ անեմ գրքերը: Գրաշարն ասում է, որ երես չկա ուրիշ, իսկ գինը չկա, որովհետե բաժանորդների համար է: Կազմարարին արգելել եմ գրքերը կազմելու, մինչև Ձեզանից պատասխան ստանամ:

Չ Բեկնազարյանին շատ անհաջող փորձերից հետո հազիվ տեսա այսօր, ասաց, որ ինքը չի կարող Տեր-Ղևոնդյանից փող ստանալ, դուք գրեցեք, թողեք Տեր-Ղևոնդյանը փողը բերի տա իրան:

Արասխանյանին կտեսնեմ և «Մուրճ»-ից արտատպելիս Ձեր կյանքի գլխավոր գծերի սրբագրությանը նորից կնայեմ:

«Խավարամիտների գլխացավը» հանձնեցի «Մշակ»-ի խմբագրությանը և խմբագրատանը կարդացի այն տողերը, որ իրանց էր վերաբերում: Առհասարակ Հայրիկի և Արիստակեսի հաշտության լուրը ուրախացրեց տրտմած կուսակցությանը: Գրել եք, թե կուսակցության կարոտը քաշում եք և տխուր եք: Տխրում ենք Ձեր տխրության համար, իսկ ինչ վերաբերում է կարոտին, կարող եմ հավատացնել, որ կուսակցությունը չի մոռանում յուր սիրելի Քյոռօղլուն . հիշում է ամեն խնջույքում, մանավանդ երբ տողերիս գրողն էլ վեր է անում յուր գազարակերի ձայնը և հանդգնում է Քյոռօղլու երգը երգել…

Յատուկ Պոէմ

Ֆիլիպը շնորհակալ է շնորհակալության համար: Այժմ

Ֆիլիպը ուրիշ գործ է սկսել . հրատարակում է տարեկան 2 4 ժողովածու, գրքեր և բրոշյուրներ: Առաջին ժողովածուն հունվարիս դուրս կգա: Ձեր խոնարհ ծառան էլ, որ խմբագրական ժողովը կազմող երեքից մինն է, խնդրում է ի դիմաց նույն ժողովի՝ Ձեր աշխատակցությունը– հրապարակախոսություն, վեպ, ոտանավոր, ինչ որ լինի: Աշխատակիցները վարձ են ստանում:

«Բանաստեղծություններս» շուտով կուղարկեմ Հայրիկին ընծա, որ կարդա սիրտը ցնծա, որ կներկայացնեք, ասացեք էս հալա ոչինչ, կեսը գդալամանումն ա դեռ . . . ի դեպ, ասեմ, որ ետ եմ նայում հիմա և հին գրածներս ուղղում, առաջին հատորից արդեն ուղղել եմ «Լոևեցի Սաքոն» և «Արևն ու Լուսինը»: Եթե հիշում եք, «Լոռեցի Սաքոյի» մեջ դուք մի սխալ էիք ցույց տալիս, այդ սխալը ես այժմ եմ գլխի ընկել և ուղղել, այդ պոեման կլավանա:

Այստեղի նորությունների մեջ նշանավոր է մի անպիտան տերտերի արարքը, որ զայրացրել է ժողովրդին: Դորա իսկական անունը հակառակին մոռացել եմ այս րոպեին, բայց նա ավելի հայտնի Է «Գագորդի» մականունով: Դանոս է տվել նահանգապետին, թե հայոց վանքում կայսերական տոնի օրը մաղթանք չի կատարվել և թե հայոց կոնսիստորում չեն ընդունում ռուսերեն գրած խնդիրներ: Այս անզգամը դեռ հերիք չէ որ քահանա է, կոնսիստորի անդամ էլ է: Անցյալ օրը կոնսիստորի անդամները այս գործի համար կոչված էին պոլիցիայում:

«Տարազ Աղբյուր Անոնսի» գործն էլ արդեն կգիտենաք: Ուզում էին Ֆիլիպի վրա ծախեն գլուխ չեկավ: Բայց ես մի բան չպարզեցի . դուք կհարցնեք, թե ինչպես թույլ կտան Ֆիլիպին մի տարում վեց կամ ավելի ժողովածու հրատարակել մի անունով: Այո՛, այդ չի կարելի . դորա համար էլ ամեն մեկիս անունով երկուսը կհրատարակվեն: Ժողովածուների մեջ կապ պահելու համար գույներով ենք որոշել անունները երկուսը կապույտ, երկուսը կանաչ, երկուսը կարմիր: Ես կարմիր խմբագիրն եմ:

Նոր-դարականները նոր առաջնորդին նոր խանդով

Յատուկ Պոէմ

օվսաննա են երգում հին գործերի համար: Գրէլ էին, թե նա շինել է երկսեռ դպրոց Ագուլիսում . Պռոշյանցը աշխարհքն ու ամբողջ Ագուլիսը վկա է կանչում, որ ինքն է շինել այդ ուսումնարանը:

Չեմ ոգում Ձեզանից ծածուկ մնա, որ Ձեր ինքնակենսագրության վրա շատ են խոսում: Երևի մինչև անգամ Ձեր դեմ գրողներ կլինեն: Ոչինչ, դա կփոխարինի հոբելյանին . . .

Բարևեցեք տիկնոջը, օրիորդներին և Մուշեղին:

Ձեր Հ. Թումանյան

Հ. Գ. Ձեր և իմ կնքահայր պ . Ս . Պառավյանցը խնդրում է հետևեք և, թե կարելի է շտապեցնեք յուր շինած ուսումնարանի գործը, որ սինոդումն է այդտեղ: Երեկ Ձեր կենացը խմեցինք նրա տանը նոր թեմական տեսուչ отец Лисицов-ի հետ (հ . Մելյան):

Նույն

Յատուկ Պոէմ